№ 208 Նոյեմբերի 22 (Դեկտեմբերի 4) 1880 Նոյեմբերի 22 (Դեկտեմբերի 4) № 208

ԻՆՆԵՐՈՐԴ ՏԱՐԻ

Տարեկան գինը 10 րուբ., կէս տարվանը 6 րուբ.:
Առանձին համարները 5 կոպէկով:
Թիֆլիսում գրվում են միմիայն խմբագրատան մէջ:
Օտարաքաղաքացիք դիմում են ուղղակի
Тифлисъ. Редакція «Мшакъ»

ՄՇԱԿ

Խմբագրատունը բաց է առաւօտեան 10—2 ժամ
(բացի կիրակի եւ տօն օրերից)
Յայտարարութիւնն ընդունվում է ամեն լեզուով:
Յայտարարութիւնների համար վճարում են
իւրաքանչիւր բառին 2 կոպէկ:

„ՄՇԱԿ“

ԼՐԱԳԻՐ ՔԱՂԱՔԱԿԱՆ ԵՒ ԳՐԱԿԱՆԱԿԱՆ

1881 թւին

(ՏԱՍՆԵՐՈՐԴ ՏԱՐԻ)

Կը հրատարակվի նոյն ձեւով և նոյն պրօգրամմայով ԱՄԵՆ ՕՐ (բացի տօն և տօներին հետեւեալ օրերից):

ՊՐՕԳՐԱՄՄԱ. I. Տէրութեան կարգադրութիւններ, II Առաջնորդող յօդուածներ, III Ներքին տեսութիւն, IV Արտաքին տեսութիւն, V Խառն լուրեր, VI Հեռագիրներ, VII Ֆելիետօն և Բանասիրական, VIII Յայտարարութիւններ:

ԼՐԱԳՐԻ ԳԻՆԸ, տարեկան 10 րուբլ, կէս տարվան 6 ր., հինգ ամս. 5 ր., չորս ամս. 4 ր., երեք ամս. 3. ր. երկու ամս. 2 ր. և մի ամս. 1 րուբլ:

Գրվել կարելի է խմբագրութեան մէջ հետեւեալ հասցէով. Тифлисъ, редакція «Мшакъ».

Խմբագիր-հրատարակող ԳՐԻԳՈՐ ԱՐԾՐՈՒՆԻ

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹԻՒՆ

Գերմանիայի հրէաները.—Ներքին տեսութիւն. Նամակ Շուլավերից. Նամակ Գորայից. Նամակ Աղնախից. Նամակ խմբագրին. Ներքին լուրեր.—Արտաքին տեսութիւն. Անգլիա. Թիւրքիա.—«Մշակի» հեռագիրներ.—Յայտարարութիւններ.

ԳԵՐՄԱՆԻԱՅԻ ՀՐԷԱՆԵՐԸ

Ինչպէս յայտնի է, գերմանական մի կուսակցութիւն, որ հակառակ է հրէաների իրաւունքների, նորերումս խնդիրք ներկայացրեց կառավարութեանը, որով պահանջում է թէ հրէաներից խլվէն մի քանի քաղաքական իրաւունքներ: Այդ միջնադարեան հրէշաւոր շարժման դէմ, որի գլխաւոր պարագլուխներից մէկն է պրօֆէսոր Տրէյչկէ, հանդէս դուրս եկան Բերլինի ամենայայտնի անձինք թէ գիտութեան և թէ պետական կեանքի մէջ: Տրէյչկէի խօսքերին թէ „Գերմանիայի հրէաները Գերմանիայի դժբաղդութիւն են“, ոչ թէ Բերլինի, բայց և Գերմանիայի այլ քաղաքների բոլոր գերմանացիները պատասխանում են կրօնական համբերողութեան սկզբունքը քարոզելով:

Մենք մասամբ ծանօթացրինք մեր ընթերցողներին այդ հակահրէական շարժման հետ մեր անցեալ առաջնորդող յօդուածներից մինի մէջ: Այժմ հակահրէական խնդիրը արդէն ներկայացրած է լանդտագին, պատգամաւորների ժողովին, որ արդէն մի քանի նիստեր ունեցաւ այդ խնդիրը քննելու համար: Ժողովը լի էր հասարակութեամբ, փողոցի վրա, ժողովի դռների մօտ մինչև անգամ հաւաքված էր ամբոխը, սպասելով հետաքրքիր, աղմկալի նիստերի: Բայց ընդհակառակն, նիստերը հանդարտ անցան: Նոյեմբերի 20-ին խօսեց պատգամաւոր Հէնել, որ բացատրելով խնդիրը, յիշեցրեց Բերլինի կօնգրէսի այն վճիռը, որով պահանջվում է Ռումինիայի, Սերբիայի և Չերնօգօրիայի հրէաների համար այդ երկիրների քրիստոնեաների հետ հաւասար իրաւունքներ և վերջացրեց իր խօսքը հարցնելով՝ արդեօք ինքն Գերմանիան, որի մայրաքաղաքումն էր կայացել այդ վճիռը, կը կամենար ազատութեան կողմից իրան զարգացման աւելի ստոր աստիճանի վրա տեսնել, քան թէ այդ փոքրիկ երկիրները: Կոմս Շտօլբէրգ, խորհրդի փոխ-նախագահ, տէրութեան կողմից պատասխանեց, որ թէև տէրութեանը դեռ ևս պաշտօնապէս յայտնի չէ հրէաների դէմ ուղերձի բովանդակութիւնը, բայց նա կարող է հաստատ ասել, որ ներկայ օրէնսդրութիւնը ճանաչելով կատարեալ հաւասարութիւն դաւանութիւնների մէջ, տէրութիւնը ամենևին դիտաւորութիւն չունի փոխել այդ օրէնքը: Առաջադիմական կուսակցութեանը պատկանողներ Զէյֆարտ, Վիրխօվ և Տրէգէր խօսեցին ընդդէմ հակահրէական շարժման և հաստատեցին որ միայն նախանձը դէպի նիւթական բարօրութիւն ունեցող մարդիկ կարող է թելադրել հրէաների դէմ բացառական օրէնքներ պահանջելու: Կենտրոնի ներկայացուցիչները յայտնեցին որ այդ խնդիրը, նրանց կարծիքով, ոչ թէ պարլամենտի միջոցով պիտի վճռվի, այլ հասարակական կեանքի և գիտութեան միջոցով: Բոլոր ատենաբանները փոխադարձ համբերողութիւն էին քարոզում միմեանց: Կղերականները պահանջում էին որ կաթօլիկները վայելէին Գերմանիայում նոյն իրաւունքները, որ վայելում են հրէաները:

Անհաշտ հրէամոլ պրօֆէսոր Տրէյչկէ դեռ չէ խօսել: Նրանից յետոյ կը խօսի մի շատ տաղանդաւոր ատենաբան, պ. Մայեր, բրէսլաուեցի հրէայ:

Նոյեմբերի 22-ի լանդտագի նիստի մէջ խօսեց հրէամոլ Շտէկկէր, պալատական քահանան: Ճառը գեղեցիկ կերպով կազմված էր, բայց լի էր սօփիզմներով և պատմական անճշդութիւններով: Նրան պատասխանեց Րիկկէրտ: Սա յիշեցրեց որ Աւստրիայում գերմանացիները հալածված են ունգարացիներով ու չեխերով և գերմանացիները կը կորցնէին իրանց օտարահպատակ ցեղակիցներին պաշտպանելու իրաւունքը, եթէ իրանց սեփական պետութեան մէջ իրանք էլ ուրիշներին հալածէին և խտրութիւն դնէին ցեղերի և դաւանութիւնների մէջ: Այդ նիստը աւելի կենդանի էր,. քան թէ նախընթացները:

Հակահրէական շարժումը հետաքրքրում է ամբողջ Գերմանիային: Նիւրնբէրգի քաղաքային խորհուրդը միաձայն հաւանութեամբ վճռեց հրատարակել մի ազդարարութիւն, որի մէջ սաստիկ պախարակում է հրէաների դէմ յարուցած հալածանքները: Նշանաւորն այն է որ Նիւրնբէրգի քաղաքային խորհուրդը ամբողջապէս բաղկացած է գերմանացի ազնւականներից:

Բերլինի „National Zeitg“ լրագիրը յայտնվում է հակահրէական շարժման դէմ: Լրագիրը ասում է, որ մի կողմի ատելութիւնը և կրքերը կը սաստկացնեն միւս կողմի ատելութիւնն ու կրքերը: Ամեն մարդ, քրիստոնեայ թէ հրէայ, աւելացնում է թերթը, իրաւունք ունի յարգված և վարձատրված լինել իր արժանաւորութեան համեմատ, նոյնպէս ամեն անձ պէտք է դատված և դատապարտված լինի անհատապէս, առանց մի ամբողջ դասակարգի պակասութիւնների ու սխալների պատասխանատուութիւնը կրելու:

Ուրիշ կերպ չէր էլ կարող լինել. ամեն տեղ կան խաւարասէրներ, կամ Տրէյչկէի պէս անազնիւ և շահասէր մարդիկ, բայց լուսաւորված Գերմանիայի մեծամասնութիւնը չէր կարող ընդունել մի բացառական, անարդար օրէնք Գերմանիայի այն քաղաքացիների վերաբերութեամբ, որոնց ամբողջ յանցանքը միայն նրա մէջն է, որ նրանք մովսիսական կրօնին են պատկանում:

Գ. Ա.

ՆԵՐՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ

ՆԱՄԱԿ ՇՈՒԼԱՎԵՐԻՑ

7 նոյեմբերի

Թէ ինչ բարերար ազդեցութիւն ունի ամեն մի բարեկարգ ուսումնարան, դա մի պարզ ճշմարտութիւն է, որ կարօտ չէ ոչինչ բացատրութեան: Սակայն, միւս կողմից, ցաւալի է խոստովանել՝ որ Շուլավէր բազմամարդ գիւղը ներկայումս չունի և ոչ մի ուսումնարան, որ լցուցանէր տեղական մանուկների ուսման կարօտը: Թողնենք, ընթերցող, թատրօն, հասարակաց ընթերցարաններ, գրականական երեկոներ, հրապարակական դասախօսութիւններ, որոնց մասին Շուլավէրը անգամ հասկացողութիւն չունի. վերջինս զուրկ է մինչև անգամ ուսումնարանի անհրաժեշտ հարկաւորութեան գաղափարից: Այս օրերս Ա. և Ս. երկու երիտասարդներ կամենալով արական ուսումնարաններ ունենալ, քրեհցին ամեն մինը մի մի սենեակ, որ աւելի նման է հաւարոցի, քան իսկական ուսումնարանական շինութեան:

Ցաւալի է այդ սենեակների կերպարանքը. սենեակները են նեղ և խոնաւ, պատուհանները կոտրած, յատակները չը տախտակած, որպիսի հանգամանքներից խեղճ մանուկները միշտ դողում են ցրտից (մանաւանդ որ կրակ ամենևին չէ վառվում) ու միշտ ներս են շնչում յատակից բարձրանող փոշին, ու վնասում հետևապէս իրանց թանգագին առողջութեանը: Այդ պարոնների դասատուութեան մասին խօսել անգամ աւելորդ է. դասատուութիւնը կայանում է առհասարակ նրանում, որ մանուկները թութակի նման անգիր անէին անմիտ երգեր, ինչպէս է «Լուսացաւ, լուսն է բարին, ծիտն է ծառին» և միշտ բղաւէին նրանցը ի տես ռամիկ ամբոխի, և կամ խառնիճաղանճ ձեռնարկների վրայով անմիտ նախադասութիւններ անցնէին:

Ուսումնարան բանալու գործի մէջ, ինչպէս նաև գրեթէ ամեն բանի մէջ, հասարակ գիւղացին ոչինչ ձայն չունի. իսկ ապահովված հարուստ դասը ըստ մեծի մասին բաւականանում է իր որդոց տաւարած չինելով, հազիւ մի քանիսները ուսումնառութեան նպատակով իրանց որդոց Թիֆլիս ուղարկած ունեն: Զարմանալի չէ, ուրեմն, որ գողութիւն, մարդասպանութիւն, վաղներ կտրել, դէզեր կրակել և այլ անբարոյական ախտեր բունաւորված են Շուլավէրի մէջ, և փոխանակ անհետանալու, աւելանում են, ընդհակառակն, հետզհետէ:

Նոր եկած պօլիցիական պրիստաւ Մամիկոնեանը, ասում են, մի քանի տեղական անձանց մօտ մի անգամ խօսեցել է ուսումնարանի հարկաւորութեան մասին. տեսնենք այդ խօսակցու-